ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» ---------- 2016թ. N ---- -Ն

ՈՐՈՇՈՒՄ

ՊԱՎԵԼ ՍԱՖՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՑՈՒՂԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

Երևան քաղաքի Նոր Նորք վարչական շրջանի Թոթովենցի և Նելսոն Ստեփանյան փողոցների միջանկյալ անցուղին անվանակոչել Պավել Սաֆյանի անվամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՊԱՎԵԼ ՍԱՖՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՑՈՒՂԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Պավել Սաֆյանը ծնվել է 1926թ. Սիսիանի շրջանի Բռնակոթ գյուղում:

1950թ. ավարտել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը:

1950-1957թթ. աշխատել է ՀԼԿԵՄ Կենտկոմում՝ որպես հրահանգիչ, ապա՝ դասախոսական խմբի ղեկավար:

1957-1963թթ. աշխատել է ՀԿԿ Կենտկոմում՝ որպես հրահանգիչ, 1963-1969թթ. ՀԿԿ Սիսիանի շրջկոմում՝ որպես առաջին քարտուղար:

1969-1972թթ. եղել է ՀԿԿ Կենտկոմի պրոպագանդայի և ագիտացիայի բաժնի վարիչի առաջին տեղակալ:

1972-1983թթ. եղել է ՀՀԿ Խորհրդային շրջկոմի առաջին քարտուղար և Նոր Նորք համայնքի ղեկավար:

1983-1986թթ. եղել է ՀԿԿ Մասիսի շրջկոմի առաջին քարտուղար:

1987թ. աշխատել է ՀՍՍՀ նախարարների խորհրդի առընթեր գլխավոր արխիվային վարչության պետ, ապա անցել աշխատանքի ռադիոֆիզիկական չափումների գիտահետազոտական ինստիտուտում՝ որպես փոխտնօրեն: Արժանացել է կառավարական բարձր պարգևների, բազմիցս ընտրվել է ՀՍՍՀ Գերագույն խորհրդի պատգամավոր:

1972թ. պաշտպանել է թեկնածուական դիսերտացիա, ստացել պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան: Հեղինակել է Գիտությունների ազգային ակադեմիայի հրատարակած Սյունիքի ժայռապատկերներին նվիրված մենագրությունը:

Պավել Սաֆյանը մահացել է 2000թ. փետրվարի 21-ին:

Պավել Սաֆյանի անվամբ Երևան քաղաքում անցուղի անվանակոչելու վերաբերյալ միջնորդություններ են ներկայացվել Նոր Նորք վարչական շրջանի ղեկավար Ա. Ուլիխանյանի և մի խումբ մտավորականների կողմից:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 23-րդ կետի դրույթներով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 4-րդ կետով՝ Երևան քաղաքի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն առաջարկությունը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՎԵԼ ՍԱՖՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՑՈՒՂԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պավել Սաֆյանի անվամբ անցուղի անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՊԱՎԵԼ ՍԱՖՅԱՆԻ ԱՆՎԱՄԲ ԱՆՑՈՒՂԻ ԱՆՎԱՆԱԿՈՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ/ԿԱՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Պավել Սաֆյանի անվամբ անցուղի անվանակոչելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ այլ իրավական ակտերում լրացումներ և/կամ փոփոխություններ կատարելու անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ